ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____ 2016թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍԿԵՐԱՆԻ, ՀԱԴՐՈՒԹԻ, ՄԱՐՏՈՒՆՈՒ ԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի, Հադրութի, Մարտունու ու Շահումյանի շրջանների գյուղատնտեսության զարգացման 2016 թվականի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Ծրագրի կատարման հսկողությունը վերապահվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն).

2) Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների պատասխանատու է հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի, Հադրութի, Մարտունու և Շահումյանի շրջանների վարչակազմերը (այսուհետ՝ շրջանների վարչակազմեր).

3) շրջանների վարչակազմերը յուրաքանչյուր եռամսյակ, մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը, հաշվետվություն են ներկայացնում նախարարություն՝ սույն Ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների մասին.

4) նախարարությունը տնտեսական տարին ավարտելուց հետո՝ եռամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ *Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2016 թվականի _____ ___-ի
N _____ -Ն որոշման

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍԿԵՐԱՆԻ, ՀԱԴՐՈՒԹԻ, ՄԱՐՏՈՒՆՈՒ ԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2016 ԹՎԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԾՐԱԳՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ
III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

I. ԾՐԱԳՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի, Հադրութի, Մարտունու ու Շահումյանի շրջանների գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ծրագրի անհրաժեշտությունը պայմանավորված է ագրոպարենային համակարգի զարգացմամբ:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մի շարք համայնքներում գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ նախորդ տարիներին կատարված աշխատանքների և ստացված արդյունքների վերլուծությունը, ինչպես նաև կատարված նոր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մի շարք համայնքների ագրոպարենային համակարգի կայուն զարգացման նպատակով անհրաժեշտ է ներդրումներ իրականացնել գյուղատնտեսության ներճյուղային զարգացման, ինչպես նաև ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ, ինչով էլ պայմանավորված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի, Հադրութի, Մարտունու և Շահումյանի շրջանների գյուղատնտեսության զարգացման 2016 թվականի ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մշակման անհրաժեշտությունը:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Ծրագրի նպատակն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի, Հադրութի, Մարտունու ու Շահումյանի շրջաններում առկա հողային, աշխատանքային, նյութատեխնիկական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և բարելավման արդյունքում նախադրյալներ ստեղծել բնակչության կենսապայմանների աստիճանական բարելավման, բնակչության արտահոսքի մեղմացման և կանխման, արժանավայել ու անվտանգ ապրելու և բարիքներ ստեղծելու համար:

4. Ծրագրի խնդիրներն են՝

1) գյուղատնտեսության զարգացման, ինչպես նաև ոչ գյուղատնտեսական գործունեության ծավալման և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում.

2) առկա գյուղատնտեսական նշանակության հողերի լիարժեք օգտագործման և հողերի վիճակի բարելավման համար հնարավորությունների ստեղծում, վարելահողերի ու բազմամյա տնկարկների՝ ոռոգման ջրով ապահովվածության մակարդակի բարձրացում.

3) բնակչության աշխատունակ հատվածի համար զբաղվածության ապահովում:

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի, Հադրութի, Մարտունու և Շահումյանի շրջաններում կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսության զարգացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել ստորև ներկայացվող միջոցառումները՝

1) Պտղատու այգիների հիմնադրում (տնկիների տրամադրում). նշված միջոցառման իրականացման նպատակով նախատեսվում է ներդնել 12 271 500 ՀՀ դրամ:

Պտղատու, հատկապես թզուկ պտղատու ծառատեսակների մշակությունը հնարավորություն կտա լուծել թարմ պտուղներով բնակչության ապահովվածության հարցը, ինչպես նաև նախադրյալներ ստեղծել վերամշակման համար.

2) Կերային բազմամյա խոտաբույսերի մշակություն (կորնգան). բազմամյա կերային մշակաբույսերի տարածքների ընդլայնումը կարևորվում է ինչպես անասունների համար կերային բազայի ապահովման, այնպես էլ վարելահողերի կառուցվածքի բարելավման տեսանկյունից: Ծրագրով նախատեսվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանում կերային բազմամյա խոտաբույսերի 73.8 հեկտար տարածքի մշակության համար հատկացնել 2 066 400 ՀՀ դրամ: Միջոցառման իրականացման նպատակով բազմամյա խոտաբույսերի տակ նախատեսված տարածքների մշակության համար կտրամադրվի դիզվառելիք՝ 1 հեկտարի դիմաց 70 լիտր, իսկ համապատասխան քանակությամբ սերմը հողօգտագործողներին կտրամադրվի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կերարտադրության և անասնաբուծության զարգացման 2015-2017 թվականների ծրագրի շրջանակներում:

3) Ջրային համակրգի արդիականացում. Ծրագրով նախատեսվում է 16 447 000 ՀՀ դրամ ուղղել համայնքներում ոռոգման ցանցի բարելավմանը և արոտների ջրարբիացմանը, այսինքն՝ հնարավորություն կստեղծվի լիարժեք օգտագործել առկա գյուղատնտեսական նշանակության հողերը, բարձրացնել վարելահողերի ու բազմամյա տնկարկների ջրապահովվածության մակարդակը: Միջոցառումը կարևոր նախադրյալ կստեղծի բանջարա-բոստանային և կերային կուլտուրաների մշակության և անասնաբուծության զարգացման համար.

4) Գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերում. գյուղատնտեսության ինտենսիվացման, նրա արդյունավետության բարձրացման կարևոր նախապայմաններից է գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի արդիականացումը, տեխնիկական հագեցվածության մակարարդակի բարձրացումը: Ծրագրով նախատեսվում է մեկ միավոր թրթուրավոր տրակտորի, ինքնագնաց խոտհնձիչի, երկու միավոր շարքացանի, երեք միավոր սկավառակային փոցխի, մեկ գութանի, մեկ սերմազտիչի և կերի վերամշակման արտադրամասի ձեռքբերում ընդհանուր 16 900 000 ՀՀ դրամ արժողությամբ, որոնք կտրամադրվեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) միջոցով՝ պայմանագրային հիմունքներով.

5) Խոշոր և մանր եղջերավոր անասունների ձեռքբերում. անասնագլխաքանակի ավելացումը ենթադրում է ոչ միայն թարմ և վերամշակված անասնապահական մթերքների նկատմամբ կարիքների բավարարում, այլև կայուն զբաղվածության ապահովում և եկամուտների ավելացում: Ծրագրով նախատեսվում է 15 180 000 ՀՀ դրամ հատկացնել խոշոր եղջերավոր անասունների և 4 710 000 ՀՀ դրամ մանր եղջերավոր անասունների ձեռքբերման նպատակով:

6) Դաշտերի մաքրում թփուտներից և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում. Ծրագրով նախատեսվում է Լեռնային Ղարաբաղի Հնարապետության Մարտունու շրջանում հատկացնել 550 000 ՀՀ դրամ թփուտներից դաշտերի մաքրման և

անհրաժեշտ, սակայն վատթար վիճակում գտնվող ու չշահագործվող, դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման համար:

6. Նշված միջոցառումներից պտղատու այգիների հիմնադրման, կերային բազմամյա խոտաբույսերի մշակության, ջրային համակարգի արդիականացման, թփուտներից դաշտերի մաքրման և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման համար նախատեսված գումարները և անհրաժեշտ ապրանքներն ու նյութերը կտրամադրվեն անհատույց, իսկ գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների, խոշոր և մանր եղջերավոր անասունների ձեռքբերման համար նախատեսված գումարները՝ անտոկոս փոխառությամբ:

7. Պտղատու այգիների հիմնադրման, կերային բազմամյա խոտաբույսերի մշակության, ջրային համակարգի արդիականացման, թփուտներից դաշտերի մաքրման և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման միջոցառումների համար ֆինանսական միջոցները կամ անհրաժեշտ ապրանքանյութերը կտրամադրվեն շրջանների վարչակազմերին՝ ներկայացված համապատասխան հայտերի հիման վրա, իսկ խոշոր և մանր եղջերավոր անասունների ու գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումներիդդսաֆ ձեռքբերման միջոցառումների համար ֆինանսական միջոցները՝ հիմնադրամի միջոցով՝ շրջանների վարչակազմերիի կողմից ներկայացված համապատասխան հայտերի հիման վրա:

Ծրագրի իրագործման համար պահանջվող ներդրումներն ըստ եռամսյակների և ըստ շրջանների ներկայացված են NN 1 և 2 աղյուսակներում:

Աղյուսակ N 1

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ

Հ/հ	*Ներդրումների նպատակը*	*2016 թվական*	*Այդ թվում՝ ըստ եռամսյակների /հազար դրամ/*			
			1-ին	*2-րդ*	*3-րդ*	*4-րդ*
1.	Պտղատու այգիների հիմնադրում	12 271,5				12 271,5
2.	Կերային բազմամյա խոտաբույսերի մշակություն	2 066,4			2 066,4	
3.	Ջրային համակարգի արդիականացում	16 447,0		5 447,0	6 000,0	5 000,0
4.	Գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերում	16 900,0		5 000,0	5 800,0	6 100,0
5.	Խոշոր եղջերավոր անասունների ձեռքբերում	15 180,0		3 080,0	9 460,0	2 640,0
6.	Մանր եղջերավոր անասունների ձեռքբերում	4 710,0		4 110,0		600,0
7.	Դաշտերի մաքրում թփուտներից և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում	550,0			550,0	
ԸՆԴԱՄԵՆԸ		***68 124,9***		***17 637,0***	***23 876,4***	***26 611,5***

Աղյուսակ N 2

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

Հ/հ	Ներդրումների նպատակը	2016 թվական	Ներդրումներն՝ ըստ շրջանների /հազար դրամ/			
			Ասկերան	Հադրութ	Մարտունի	Շահումյան
1.	Պտղատու այգիների հիմնադրում	12 271,5		8 997,0	3 274,5	
2.	Կերային բազմամյա խոտաբույսերի մշակություն	2 066,4			2 066,4	
3.	Ջրային համակարգի արդիականացում	16 447,0	5 447,0	3 000,0	6 000,0	2 000,0
4.	Գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերում	16 900,0		13 700,0	1 200,0	2 000,0
5,	Խոշոր եղջերավոր անասունների ձեռքբերում	15 180,0	2 420,0	12 100,0	660,0	
6,	Մանր եղջերավոր անասունների ձեռքբերում	4 710,0	3 360,0	600,0	750,0	
7,	Դաշտերի մաքրում թփուտներից և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում	550,0			550,0	
ԸՆԴԱՄԵՆԸ		*68 124,9*	11 227,0	**38 397,0**	14 500,9	4 000,0

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

8. Համապատասխան ներդրումներ կատարելու դեպքում սույն Ծրագրի իրականացումից ակնկալվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում գյուղատնտեսական ոլորտի զարգացման առաջընթաց, որն առաջիկա տարիներին կդրսևորվի հետևյալ արդյունքներով.

1) պտղատու նոր այգիների հիմնադրումը նախադրյալներ կստեղծի շրջաններում պտղաբուծության ճյուղի զարգացման համար: Հնարավորություններ կստեղծվեն ներմուծվող պտղատեսակների զգալի մասը փոխարինել տեղական մրցունակ արտադրանքով, ինչպես նաև կխթանվի պտղի նկատմամբ ինքնաբավության մակարդակի բարձրացմանը: Արտադրության ծավալների ավելացումը կնպաստի վերամշակման ճյուղի զարգացմանը:

Իրականացվող ներդրումների հաշվին ձեռք կբերվեն և հողօգտագործողներին անհատույց կտրամադրվեն տարբեր պտղատեսակի տնկիներ, որոնք պտղաբերության կանցնեն տնկման 3-4-րդ տարում: Հիմնադրված այգիներից ակնկալվող համախառն բերքը, տվյալ տարում, կազմում է 570-865 տոննա, իսկ լրիվ պտղաբերության հասնելուց հետո՝ 1160-1380 տոննա. 1 տոննայի միջին արժեքը կազմում է 200 000 - 300 000 ՀՀ դրամ.

2) Կերային բազմամյա խոտաբույսերի մշակություն (կորնգանի սերմի տրամադրում). դրական ազդեցություն կունենա գյուղատնտեսական հողատեսքերի բերրիության բարձրացման վրա: Այն, որպես ցանքաշրջանառության կարևոր օղակ, կնպաստի դաշտերի մոլախոտերից մաքրմանը, հողի կառուցվածքի բարելավմանը և ազոտով հարստացմանը, կբարձրանա նրանից հետո մշակվող կուլտուրաների բերքատվությունը:

Նշված ցանքսերից հետագայում կապահովվի տարեկան միջինը 370-400 տոննա համախառն բերք՝ տարվա կտրվածքով 1 տոննայի միջին արժեքը կազմում է 35 000 ՀՀ դրամ: Ստացված բերքը որպես անասնակեր օգտագործման դեպքում ակնկալվում է ստանալ միջին հաշվով 15 տոննա միս՝ կենդանի քաշով, որի ընդհանուր արժեքը, գործող գներով, կազմում է 15 000 000 ՀՀ դրամ:

3) ոռոգման համակարգի բարելավման շնորհիվ կավելանան ոռոգվող հողատարածքները, ինչը զգալիորեն կբարձրացնի վարելահողերի օգտագործման արդյունավետությունը, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, կենդանիների մթերատվությունը և արտադրության ծավալները:

Իրականացվող ներդրումների հաշվին ձեռք կբերվեն և հողօգտագործողներին անհատույց կտրամադրվեն տարբեր տրամագծի պոլիէթիլենային խողովակներ, կկառուցվեն և կվերանորոգվեն ոռոգման ցանցեր.

4) գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերումը կնպաստի ժամանակին և ագրոկանոններին համապատասխան մշակությանը, ինչպես նաև կհամալրի առկա գյուղատնտեսական տեխնիկայի պարկը.

5) անասնագլխաքանակի ավելացման նպատակով ձեռք կբերվի 69 գլուխ խոշոր եղջերավոր անասուն և 157 գլուխ մանր եղջերավոր անասուն, որոնց բուծման արդյունքում հաջորդ տարուց սկսած կարտադրվի 5520 կիլոգրամ տավարի և 3770 կիլոգրամ ոչխարի միս՝ կենդանի քաշով, և 82 800 կիլոգրամ կաթ, դրանց ընդհանուր գումարը, գործող գներով, մեկ տարում, կազմում է 21 710 000 ՀՀ դրամ.

6) գյուղատնտեսության ոլորտի գործունեության արդյունքում կբարձրանա բնակչության զբաղվածության մակարդակը և կավելանան եկամուտները:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ- ՆԱԽԱՐԱՐ *Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍԿԵՐԱՆԻ, ՀԱԴՐՈՒԹԻ, ՄԱՐՏՈՒՆՈՒ ԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Անհրաժեշտությունը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի, Հադրութի, Մարտունու և Շահումյանի շրջանների գյուղատնտեսության զարգացման ծրագրով ներկայացվում են գյուղատնտեսության զարգացման 2016թվականին իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

Նշված շրջանների գյուղատնտեսության զարգացման ծրագիրը նպատակաուղղված է շրջաններում հիմնական միջոցների ստեղծմանը և հետագա զարգացման համար նախադրյալների ապահովմանը:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Շրջանների գյուղատնտեսության զարգացման նախորդ տարիներին իրականացված միջոցառումների արդյունքում դրական տեղաշարժ է արձանագրվել բուսաբուծության և անասնաբուծության ներճյուղային կառուցվածքում, ինչպես նաև՝ ոռոգման համակարգի բարելավման, գյուղական ճանապարհների վերանորոգման բնագավառում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ագրոպարենային համակարգի կայուն և հետևողական զարգացման նախադրյալների ապահովման նպատակով անհրաժեշտ է ֆինանսական միջոցներ հատկացնել գյուղատնտեսական ճյուղերի զարգացման և ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ:

Նպատակը և բնույթը

Ծրագրի նպատակը Ասկերանի, Հադրութի, Մարտունու ու Շահումյանի շրջաններում առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման արդյունքում բնակչության կենսապայմանների աստիճանական բարելավման, բնակչության արտահոսքի մեղմման և կանխման, արժանավայել ու անվտանգ ապրելու և բարիքներ ստեղծելու համար նախադրյալների ստեղծումն է:

Ակնկալվող արդյունքը

Ծրագրի իրականացումից ակնկալվում է Ասկերանի, Հադրութի, Մարտունու ու Շահումյանի շրջաններում համայնքներում գյուղատնտեսական ոլորտի զարգացման առաջընթաց:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք

Նախագիծը մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության, աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության, բուսաբուծության և բույսերի պաշտպանության, գյուղատնտեսության ծրագրավորման, մարքենթինգի և ագրովերամշակման և իրավաբանական բաժինների կողմից:

<u>Այլ տեղեկություններ</u>

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի, Հադրութի, Մարտունու և Շահումյանի շրջանների գյուղատնտեսության զարգացման 2016 թվականի ծրագիրը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ *Ա.ՄԽՈՅԱՆ*

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍԿԵՐԱՆԻ, ՀԱԴՐՈՒԹԻ, ՄԱՐՏՈՒՆՈՒ ԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի, Հադրութի, Մարտունու և Շահումյանի շրջանների գյուղատնտեսության զարգացման 2016 թվականի ծրագիրը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: Նախագծի ծախսերը նախատեսված են 2016 թվականի պետական բյուջեով:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍԿԵՐԱՆԻ, ՀԱԴՐՈՒԹԻ, ՄԱՐՏՈՒՆՈՒ ԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի, Հադրութի, Մարտունու և Շահումյանի շրջանների գյուղատնտեսության զարգացման 2016 թվականի ծրագիրը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ Ա.ՄԽՈՅԱՆ

ԻՐԱՎԱԿԱՆ-ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍԿԵՐԱՆԻ, ՀԱԴՐՈՒԹԻ, ՄԱՐՏՈՒՆՈՒ ԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի, Հադրութի, Մարտունու և Շահումյանի շրջանների գյուղատնտեսության զարգացման 2016 թվականի ծրագիրը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի, Հադրութի, Մարտունու և Շահումյանի շրջանների գյուղատնտեսության զարգացման 2016 թվականի ծրագիրը հաստատելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն

ԼՂՀ կառավարության և ԼՂՀ վարչապետի որոշումներն ուղարկել՝

1. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԼՂՀ արդարադատության նախարարություն
3. ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն
4. ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ
5. ԼՂՀ շրջաններ

Նախագիծը պատրաստողը՝

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչություն

_____ *Ն.*

Մուսայելյան (ստորագրությունը)

«_____» _____ 2016թ.